ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 27

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

<<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> /բաժին-9, խումբ-1, դաս-1, ծրագիր 51/ 4639 հոդվածը ավելացնել 26,576 հազար դրամով, ժշտված պլանը սահմանել 6,218,576 հազ. դրամ: Վարչական բյուջեի եկամտային մասը ավելացնել 26,576 հազար դրամով, Ճշտված պլանը սահմանել 40610,376 հազ. դրամ:

Կառավարման ապարատ /բաժին-1, խումբ - 1, դաս - 1, ծրագիր 51/ 4112 հոդվածը ավելացնել 300,0 հազար դրամով, ճշտված պլանը սահմանել 1055,0 հազ. դրամ: 4214 հոդվածը ավելացնել 45,0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 113,3 հազ. դրամ:

Սոցիալական պաշտպանություն /բաժին - 10, խումբ - 7, դաս - 1, ծրագիր - 54/ 4729 հոդվածը ավելացնել 500,0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմաներ 536,0 հազ. դրամ:

Հասարակական կազմակերպություններին աջակցություն /բաժին - 10, խումբ - 7, դաս - 1, ծրագիր -55/ 4819 հոդվածը ավելացնել 100,0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 150,0 հազ. դրամ:

Անասնաբուժական ծառայություններ /բաժին - 4, խումբ- 2, դաս-1, ծրագիր-55/ 4266 հոդվածը ավելացնել 15,0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 15,0 հազ. դրամ:

Հանգիստ, մշակույթ, կրոն /բաժին -8 , խումբ - 5, դաս - 1, ծրագիր -55 / 4111 հոդվածը ավելացնել 32,0 հազ. դրամով, ճշտված պլանը 460,098:

Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում /բաժին - 8, խումբ -2, դաս - 3, շրագիր 51/ 4269 հոդվածը ավելացնել 100,0 հազ. դրամ, ճշտված պլանը սահմանել 404,0 հազ. դրամ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 200,0 հազ. դրամ հատկացնել ֆոնդային բյուջեին ջրային հանգույցների շահագործում և պահպանում /բաժին - 6, խումբ - 6, դաս - 1, ծրագիր - 55/ 5113 հոդվածին, ճշտված պլանը սահմանել 1034,0 հազ. դրամ:

Հատկացումները կատարել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, ճշտված պլանը սահմանել 1264,0 հազ. դրամ:

	Կողմ -5	Դեմ -0	Ձեռնպահ -0
1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ			
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ			
3. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ			
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ			
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 28

ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ-Ի 3-ՐԴ ԵՌԱԿՍՅԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և 69-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Հաստատել համայնքի 2014 թ-ի 3-րդ եռամսյակի բյուջեիկատարման հաղորդումը՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների /կցվում է/:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ
3. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված 1
Եղեգնավան համայնքի ավագանու
11.11.2014 թ-ի թիվ 28 որոշման

2014 Թ. ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԱՃՈՂԱԿԱՆ ՏԵՍՔՈՎ

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	Սեպտեմբերի պլանը աճողական տեսքով (հազ.դրամ)	Սեպտեմբերի կատարո-ղականը աճողական տեսքով (հազ.դրամ)	Փաստացին պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ	**43210,38**	**32461,30**	**35298,23**	**108,74%**
ՀՈՂԻ ՀԱՐԿ	8800,20	6599,70	6176,35	93,59%
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ	750,00	540,00	853,75	158,10%
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	240,00	180,00	281,95	156,64%
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	25915,18	19434,60	19458,90	100,13%
ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2405,00	1900,00	2858,80	150,46%
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2600,00	1944,00	2600,00	133,74%
ՎԱՐՉ.Բ-Ի ՊԱՀՈՒՍՏ. ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴ.ԲՅ. ԿԱՏԱՐՎ.ՀՏԿՑ-ԻՑ ՄՈՒՏՔ.	2600,00	1944,00	2600,00	133,74%
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	0,00	0,00	1024,60	0,00%
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔԵՐ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁ.	50,00	36,00	20,78	57,73%
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ	1150,00	855,00	984,80	115,18%
ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐ	1300,00	972,00	1038,30	106,82%
ԸՆԴԱՄԵՆԸ	**43210,38**	**32461,30**	**35298,23**	**108,74%**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

Հավելված 2
Եղեգնավան համայնքի ավագանու
11.11.2014 թ-ի թիվ 28 որոշման

2014թ. ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԱՃՈՂԱԿԱՆ ՏԵՍՔՈՎ

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (հազ.դրամ)	Ամսվա պլանը (հազ.դրամ)	Փաստացի ծախսը (հազ.դրամ)	Ծախսը պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ ՝	58276,776	49583,2	35776,783	72.16 %
Աղբահանություն	1340,0	1055,0	1055,0	100.00 %
Բարձրագույն կրթություն	200,0	200,0	100,0	50.00 %
Գյուքի նկատմամբ իրավունք	640,0	640,0	27,0	4.22 %
Կառ. ապար նախորդ տարվա պարտք	-12,0	12,0	12,0	100.00 %
Կառավարման մարմ պահպանում	28057,8	24419,8	21946,085	89.87 %
Հանգիստ,մշակույթ	4340,0	4140,0	2969,998	71.74 %
Հասարակական կազմակերպություն	100,0	100,0	50,0	50.00 %
Նախակրթություն	6218,576	5000,0	4714,0	94.28 %
Ջրային կառույց շահագ.նպահպանում	3820,0	3300,0	1614,40	48.92 %
Սոց.պաշտպան.անապահով ընտանիքներին	2200,0	2200,0	1749,0	79.50 %
Փողոցների լուսավորություն	1900,0	1700,0	633,3	37.25 %
Ֆոնդ.բյուջեի պահուստային ֆոնդ	0,00	0,00	0,00	0.00 %
Ասֆալտ -բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	4700,4	4700,4	0,00	0.00 %
Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	1000,0	1000,0	610,0	61.00 %
Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	916,0	816,0	296,0	36.27 %
Միջուկային վառելիք	300,0	300,0	0,00	0.00 %
Ջրային տնտեսության ենթակառույցների կապիտալ վերավորոգում	0,00	0,00	0,00	0.00 %
ԸՆԴԱՄԵՆԸ ՝	58276,776	49583,2	35776,783	72.16 %

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 29

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

2015 **թ-ի համար սահմանել հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

<u>հիմնական օբյեկտների համար՝</u>

ա/ մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ,

բ/ սույն կետի ,,ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ,

բգ/ 1001 մինչև 3000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ,

բդ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70.000 դրամ:

<u>ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝</u>

գ/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ,

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերակազմակերպման, արդիականացման աշխատանքների

համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքիգաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ,

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքիգաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ,,ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5,000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5,000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքին (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

6 . Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրայինսննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատներըժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3 000 դրամ:

Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

11. Համայնքի տարածքում բոլոր տեսակի աճուրդ-վաճառքների, մրցույթներիմասնակցության համար տեղական վճար սահմանել 5.000 դրամ:

12. Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանելմինչև 1 հա.-իհամար՝ 1.000 դրամ, 1 հա-ից 10 հա-ի համար՝ 5.000 դրամ, 10 հա և ավելի դեպքում՝ 10.000 դրամ:

13. Համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման համար սահմանել հետևյալ ամսական վճարներ.

1/ Կենցաղային աղբի համար՝ 1 շունչ՝ 100 դրամ:

2/ Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ ըստ ծավալի՝ 1 խորանարդ մետրի համար՝ 1000 դրամ,

բ/ ըստ զանգվածի՝ 1 տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

3/ Անհատ ձեռնարկատերերը՝
ա/ մինչև 20 քմ մակերես ունեցող շինությունների համար՝ 300 դրամ,
բ/ 20 քմ և ավելի մակերես ունեցող շինությունների համար՝ 500 դրամ:
4/ Պետական և ոչ պետական հիմնարկները՝ 2000 դրամ:

14. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0.3 գործակիցը:

	Կողմ -5	Դեմ -0	Ձեռնպահ -0
1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ			
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ			
3. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ			
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ			
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 30

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Համայնքում հաշվառված յուրաքանչյուր բնակչի համար ամսական սահմանել խմելու ջրի վարձ 130 դրամ:

2. Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողներից յուրաքանչյուր ամիս մեկ երեխայի համար տեղական վճարը սահմանել 5.000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ
3. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱՁԱՐՅԱՆ